ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 31-ին կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր- Հայաստան» հիմնադրամի կառավարման խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը

Մասնակցում էին.

Անդրանիկ Մարգարյան	Հայաստանի Հանրապետության վարչապետ, խորհրդի նախագահ
Վահրամ Ներսիսյանց	Հայաստանի Հանրապետության Նախագահի գլխավոր տնտեսական խորհրդական
Անդրանիկ Մանուկյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարար
Վարդան Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյան	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
Անդրանիկ Անդրեասյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Տոնական Ղազարյան	Շենիկ ՁՕԸ
Նազելի Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Վանիկ Սողոմոնյան	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ
Վարդան Համբարձումյան	Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա իրավաբանական անձանց միություն

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	«Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն
Ալեքսանդր Բախտամյան	«Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի գնումների ղեկավար, Կառավարման խորհրդի ժամանակավոր քարտուղար
Ալեքս Ռասին	Կառավարման խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ներկայացուցիչ
Սիմոն Ղոնախչյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի մամլո քարտուղար

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայության մրցույթին հայտ ներկայացրած

կազմակերպությունների գնահատման հանձնաժողովի կազմի և «Առաջարկների ներկայացման հրավերի» քննարկում և հաստատում:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի Կատարման վրա հիմնված ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման գործող համակարգի վերանայման և բարելավման մրցույթի նախաորակավորված կազմակերպությունների ընտրության հանձնաժողովի կազմի և շահագրգռվածության արտահայտման հայտի քննարկում և հաստատում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի բնապահպանական և սոցիալական գնահատման և վերասկողության մրցույթի նախաորակավորված կազմակերպությունների ընտրության հանձնաժողովի կազմի և շահագրգռվածության արտահայտման հայտի քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի ճանապարհների ուսումնասիրության և նախագծման համար խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսության» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «Ութ ինքնահոս ոռոգման համակարգերի նախագծման և շինարարության վերահսկման» և «Չորս ինքնահոս ոռոգման համակարգերի նախագծման և շինարարության վերահսկման» խորհրդատվական ծառայությունների մրցույթի շահագրգռվածության ցուցաբերման հրավերների և նախաորակավորման գնահատող հանձնաժողովի կազմի քննարկում և հաստատում:
6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի անկախ կառավարչի (խորհրդատվական ընկերության) ընտրության մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի «Վեց մայր ջրանցքների նախագծման և շինարարության վերահսկման» խորհրդատվական ծառայության մրցույթի «կարճ ցուցակի», գնահատող հանձնաժողովի կազմի և «Առաջարկների ներկայացման հրավերի» քննարկում և հաստատում:
8. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրերի աշխատանքային և ֆինանսական պլաններում ՀՄԿ-ի կողմից առաջարկված փոփոխությունների և լրացումների քննարկում և հաստատում:
9. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի միջանկյալ գնումային պլանում ՀՄԿ-ի կողմից առաջարկված փոփոխությունների և լրացումների քննարկում և հաստատում:

10. «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի աշխատակազմի հաստիկացուցակի, աշխատավարձային ֆոնդի և պարգևատրումների համակարգի քննարկում և հաստատում:
11. «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավարի ընտրության արդյունքների քննարկում և հաստատում:
12. «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատուի ընտրության արդյունքների քննարկում և հաստատում:
13. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի սպասարկող բանկի և ֆինանսական գործակալի պայմանագրերում ՀՄԿ-ի կողմից առաջարկված փոփոխությունների և լրացումների քննարկում և հաստատում:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայության մրցույթին հայտ ներկայացրած կազմակերպությունների գնահատման հանձնաժողովի կազմը և «Առաջարկների ներկայացման հրավերը»:*

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի Կատարման վրա հիմնված ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման գործող համակարգի վերանայման և բարելավման մրցույթի շահագրգռվածության արտահայտման հայտը և նախաորակավորված կազմակերպությունների ընտրության հանձնաժողովի կազմը՝ Դ.Լոքյանի առաջարկությամբ ավելացնելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցչին:*

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի բնապահպանական և սոցիալական գնահատման և վերասկողության մրցույթի նախաորակավորված կազմակերպությունների ընտրության հանձնաժողովի կազմը և շահագրգռվածության արտահայտման հայտը:*

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Գյուղական ճանապարհների վերականգնում» ենթածրագրի ճանապարհների ուսումնասիրության և նախագծման համար խորհրդատվական ընկերության ընտրության մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքները:*

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսության» ենթածրագրի «Ենթակառուցվածքներ» բաղադրիչի «Ութ ինքնահոս ոռոգման համակարգերի նախագծման և շինարարության վերահսկման» և «Չորս ինքնահոս ոռոգման համակարգերի նախագծման և շինարարության վերահսկման» խորհրդատվական ծառայությունների մրցույթի շահագրգռվածության ցուցաբերման հրավերները և նախաորակավորման գնահատող հանձնաժողովի կազմը:*

Օրակարգի վեցերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի անկախ կառավարչի (խորհրդատվական ընկերության) ընտրության մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքները:*

Օրակարգի յոթերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի «Վեց մայր ջրանցքների նախագծման և*

շինարարության վերահսկման» խորհրդատվական ծառայության մրցույթի «կարճ ցուցակը», գնահատող հանձնաժողովի կազմը և «Առաջարկների ներկայացման հրավերը»:

Օրակարգի ութերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Ոռոգվող գյուղատնտեսություն» ենթածրագրերի աշխատանքային և ֆինանսական պլաններում ՀՄԿ-ի կողմից առաջարկված փոփոխությունները և լրացումները: Միաժամանակ, Վ.Խաչատրյանի առաջարկությամբ Ա.Հովսեփյանին հանձնարարվեց ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի վարկային ենթաբաղադրիչի վերաբերյալ:*

Օրակարգի իններորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի միջանկյալ գնումային պլանում ՀՄԿ-ի կողմից առաջարկված փոփոխությունները և լրացումները:*

Օրակարգի տասներորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի աշխատակազմի հաստիկացուցակը, աշխատավարձային ֆոնդը և պարգևատրումների համակարգը:*

Օրակարգի տասնմեկերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր ֆինանսական ղեկավարի ընտրության արդյունքները:*

Օրակարգի տասներկուերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատուի ընտրության արդյունքները:*

Օրակարգի տասներեքերորդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ *հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի հայաստանյան ծրագրի սպասարկող բանկի և ֆինանսական գործակալի պայմանագրերում ՀՄԿ-ի կողմից առաջարկված փոփոխությունները և լրացումները:*

Օրակարգի հարցերի սպառելուց հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ)
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՀՄՀ – ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԲԱԽՏԱՄՅԱՆ